ԳԵՂԵՑԻԿԻ ՈՐՈՆՈՒՄՆԵՐՈՒՄ

Սույն թվականի փետրվարի 6-ին Նարեկացի արվեստի միության ցուցասրահում կայացավ երիտասարդ և շնորհալի նկարչուհի Արմինե Պետրոսյանի «Կյանքի գույները և հոգևորի լույսը» խորագրով առաջին անհատական ցուցահանդեսը: Ներկայացվել է տարբեր տարիներին կերտված 35 ստեղծագործություն՝ սրբապատկերների կրկօրինակումներ և գեղանկար աշխատանքներ:

Ա. Պետրոսյանը սովորել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գեղարվեստի ֆակուլտետի կերպարվեստի պատմության և տեսության բաժնում: Դեռևս ուսանողական տարիներից է ձևավորվել սերը հայ միջնադարյան արվեստի նրկատմամբ, և թերևս պատահական չէ, որ երիտասարդ արվեստաբանը իր մագիստրոսական

«Աստվածամայրը մանկան հետ» (2016) «Աստվածամայրը մանկան հետ» (2013)

աշխատանքը պաշտպանեց «Սրբապատկեր. քրիստոնեական գաղափարների համակարգումը պատկերային նոր ձևերում» թեմայով: Սա կարծես առիթ դարձավ, որ նկարչուհին զբաղվի սրբանկարչությամբ՝ այն առավել խորը և համակողմանի ուսումնասիրելու համար: 2012-ից նա սկսեց հաճախել Արարատյան հայրապետական թեմում գործող սրբանկարչության և մանրանկարչության դասընթացներին: 2014-ից առ այսօր երիտասարդ արվեստաբանն աշխատում է ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների» հանդեսում, որտեղ հրատարակվել են նրա գիտական հոդվածները, որոնցից առաջինը նվիրված էր XIX-XX դդ. հայ ազգային բնանկարի հիմնադիր, գեղանկարիչ Գևորգ Բաշինջաղյանի արվեստին (Բնանկարը՝ որպես աշխարհընկալում Գ. Բաշինջաղյանի արվեստում, 2015, № 2, էջ 333-345), իսկ մյուսն անդրադարձ էր հայ միջնադարյան պատկերագրության մեջ, մասնավորապես սրբապատկերում կիրառվող գույ-

ների նշանակությանը և խորհրդին (Սրբապատկեր. գույները միջնադարյան հայ պատկերագրության մեջ, 2016, № 1, էջ 330-338):

Նկարչուհին 2011 թ. մասնակցեց Ե. Չարենցի տուն-թանգարանում կազմակերպված՝ «Աշնան գույներ» խորագիրը կրող պատկերահանդեսին, որտեղ ցուցադրվեցին «Իմ ծառը» (2007), «Նատյուրմորտ ծաղիկներով» (2011), «Աշնան արև» (2009) ստեղծագործությունները: Մեկ տարի անց՝ 2012-ին, նույն թանգարանում կայացած համանուն մեկ այլ ցուցահանդեսում ներկայացվեցին «Աշնան արև» (2009), «Ծաղիկներ» (2010), «Նատյուրմորտ» (2009), «Տխրություն» (2007) ստեղծագործությունները: «Արտ ֆեստ» (2013) առաջին երիտասարդական հանրապետական փառատոնի բացօթյա ցուցահանդեսին Ա. Պետրոսյանը արվեստասեր հանրությանը հանդիպեց «Աշնան արև» (2009) կտավով, իսկ «Տիրամայրը մանկան հետ» (2014, կրկնօրինակ) գործով՝ 2014 թ. Արարատյան հայրապետական թեմում կայացած Սրբապատկերների ցուցահանդեսին: Ա. Պետրոսյանի այս վերջին՝ անհատական ցուցահանդեսում ներառված են 2007 թ. մինչ օրս ստեղծված գործերը: Յուղաներկով, գուաշով, տեմպերայով կատարված աշխատանքների վերաբերյալ (19 սրբապատկեր և 16 գեղանկար) նկարչուհին նշում է, որ սրբապատկերների ուրույն աշխարհն իրեն հոգևոր խաղաղություն և հանգստություն է պարգևում, իսկ գեղանկարներում արտահայտված են իր հոգեվիճակը, տպավորությունները և հույզերը:

ՀՀ գիտության վաստակավոր գործիչ, ՀՀ պետական մրցանակի դափնեկիր, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Հրավարդ Հակոբյանը ցուցահանդեսի բացման առթիվ իր ողջույնի խոսքում նկատեց. «Կերպարվեստում գույնի և կոմպոզիցիայի զգացողությունն առաջնային է, իմ համեստ և մեղմիկ ուսանողուհու մեջ կարևորում եմ գույնի նուրբ զգացողության առկայությունը և նուրբ կոլորիտը...»[1]:

Պատկերահանդեսի կայացման կապակցությամբ նկարչուհուն շնորհավորեց և անգուգական կատարմամբ հանդես եկավ ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի ավագ գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու, հանրապետական և միջազգային մրցույթների դափնեկիր դաշնակահարուհի Լիլիթ Արտեմյանը, որը կատարեց Ֆրեդերիկ Շոպենի «Սկերցո» երկ 31, թիվ 2, սի բեմոլ մինոր ստեղծագործությունը:

Կերպարվեստի բնագավառում Ա. Պետրոսյանի հետաքրքրությունները չեն սահմանափակվում միայն միջնադարյան արվեստով, այլ ընդգրկում են նաև գեղանկարչության բնանկարի և նատյուրմորտի ժանրերը: Աշխատանքները կրում են նկարչուհու ուրույն ձեռագիրը՝ երփնագրի ներդաշնակ համադրումներով, ազատ, զգայուն վրձնահարվածներով և գունային նկարագրի թարմ, անմիջական բնույթով: Հատկապես երանգային խաղաղ և արտահայտիչ երկխոսությամբ ստեղծված կտավներում զգացվում է երիտասարդ նկարչուհու ստեղծագործական ոգին՝ ավյունով լեցուն հուզականությամբ, լավատեսությամբ և նրբությամբ:

---

[1] **Պեպանյան Ռ.,** *Կյանքի գույների և հոգևոր լույսի նրբագեղ համադրություն (Նորաթերթ, 7.II.2017, http://norateht.am):*

Ստեղծագործական ազատությամբ են «շնչում» թե՛ միջնադարյան պատկերները և թե՛ գեղանկարները:

Կրկնօրինակված սրբապատկերների շարքում իրենց կատարողական բարձր կուլտուրայով են առանձնանում հատկապես «Աստվածամայրը մանկան հետ» (2013), «Սուրբ Միքայել հրեշտակապետ» (2013), «Հիսուս Քրիստոս Ամենակալ» (2016) գործերը: Անդրադառնալով գեղանկարներին՝ կարելի է նկատել, որ «Ծառերի զրույց» (2015) բնանկարում, օրինակ, կարծես արտահայտվել է վրձնի եռանդուն շարժումներով կերտված երանգախաղով՝ արվեստագետի անհանգիստ, փոթորկոտ հոգեվիճակը. այստեղ գերիշխում է գունային ինտենսիվությունը, մինչդեռ «Բնանկարը» (2016) աչքի է ընկնում ներդաշնակ, հոգեպարար հանգստությամբ՝ ազատ վրձնումներով ստեղծելով գունային վառ համադրումներ: Գեղարվեստական այլ որակներ և այլ տրամադրություն է հաղորդում «Երազի խրճիթը» (2015) ստեղծագործությունը: Նկարչուհին խուսափում է պատկերի մանրազնին մշակումից՝ տոնային, լուսաստվերային նուրբ անցումներից՝ առաջնություն տալով բնապատկերի գունային հագեցվածությանը: Ե՛վ լայն վրձնահարվածներով, և՛ երանգների փոքր, դետալային բնութագրությամբ, գունաբծերի սահուն հերթագայությամբ, ինչպես նաև երփնագրի ներդաշնակ համադրումներով առանձնանում են «Ծաղիկներ» (2016), «Յասամաններ» (2015), «Նատյուրմորտ» (2010) աշխատանքները: Եթե բնանկարներում հանդես են գալիս գույների հնչեղ, էքսպրեսիվ զուգորդումները, որոշ դեպքերում՝ թանձր ու հյութեղ ֆակտուրայով և համապատասխան կոմպոզիցիոն, բազմերանգ կառուցվածքով, ապա նատյուրմորտներում նկատվում է այլ մոտեցում. լուսառատ գույների կիրառմամբ ստեղծվում են քնարական հուզականությամբ լի պատկերներ:

Կակաչներ (2014)

Դրվատելի է, որ մասնագիտությամբ արվեստաբան Արմինե Պետրոսյանը դրսևորվում է նաև որպես գեղանկարիչ: Հաջողություն ենք մաղթում նրան՝ ստեղծագործական նորանոր վերելքների նվաճման սպասումով և հավատով, որ այս անհատական ցուցահանդեսը կոգեշնչի երիտասարդ նկարչուհուն, նոր գործեր արարելու և առավել ներկայանալի ցուցահանդեսների կայացման յուրօրինակ մեկնարկ կդառնա:

ԿԻՐԱԿՈՍՅԱՆ Մ. Ա.
Արվեստագիտության թեկնածու